

Փոքրիկ պանդան

Օլգա Գավրիսցևա



Բամբուկենիների մեջ ապրում էր պանդաների ընտանիքը՝ հայր պանդան, մայր պանդան և դուստր պանդան: Երբեմն փոքրիկ պանդան ծանծրանում էր և շատ էր ուզում ընկերներ ունենալ: Ոչ շատ հեռվում ապրում էր եղջերուների ընտանիքը՝ մայր եղջերուն, հայր եղջերուն և երկու փոքրիկ եղնիկները: Եղնիկներն ամբողջ օրը խաղում էին միմյանց հետ ու վազվզում մարգագետնում:

- Եկեք ընկերներ լինեք, - առաջարկեց փոքրիկ պանդան:
- Ինչի՞ համար քեզ հետ ընկերանանք: Դու մեզ նման չես, - պատասխանեց մի եղնիկը: - Դու մեզ նման արագ վազել ու թռչկոտել չգիտես: Կճղակների փոխարեն դու մագիլներ ունես:
- Դու միայն բամբուկ ուտել ու ծառերի վրա մագլցել գիտես, - ասաց մյուս եղնիկը:

Եվ նրանք շտապեցին հեռանալ պանդայից և խաղալ միայն միմյանց հետ: Տխրեց պանդան, լացեց ու գնաց ծնողների մոտ.

- Եղնիկները չեն ուզում ինձ հետ ընկերանալ, - ասաց պանդան, - քանի որ ես իրենց նման չեմ: Ուրեմն ես ավելի՞ վատն եմ, քան նրանք:
 - Եթե դու նրանց նման չես, դա չի նշանակում, որ դու վատն ես, - պատասխանեց մայր պանդան:
 - Լավ ընկեր լինելու համար բացարձակապես պարտադիր չէ իմանալ այն, ինչ գիտեն մյուսները, - ասաց հայր պանդան:
- Մի անգամ դժբախտություն տեղի ունեցավ: Եղնիկներն անտառում, իրար

հետևից վազելով, ընկան որսորդների փորած փոսը: Ինչքան նրանք փորձեցին փոսից դուրս գալ, չկարողացան: Նույնիսկ թռչկոտելը չօգնեց նրանց: Նրանց ծնողները կանգնել էին փոսի եզրին և ոչ մի բանով չէին կարող օգնել իրենց ձագուկներին: Փոսը շատ խորն էր: Պանդան եղևիկներին տեսավ փոսի մեջ ու վազեց տուն՝ օգնություն կանչելու:

– Եղևիկների հետ դժբախտություն է պատահել: Մենք պետք է նրանց օգնենք, – բացականչեց նա: – Մեզ ամուր բամբուկի ձողեր ու լիանաներ են պետք:

Հայր պանդան բամբուկի ձողեր հանեց, իսկ մայր պանդան՝ իր սուր ճիրաններով ճկուն լիանաներ կտրատեց: Եվ նրանք բոլորով գնացին դեպի փոսը:

Փոքրիկ պանդան իջավ փոսի մեջ և լիանաների օգնությամբ եղևիկներին կապեց բամբուկներին: Նա դա հեշտությամբ արեց: Իսկ եղևիկները չէին կարող իրար կապել, քանի որ նրանք մագիլների փոխարեն կճղակներ ունեին:

Իսկ վերևից մեծ պանդաներն ու եղջերուները միասին սկսեցին դուրս քաշել բամբուկները, որոնց կապված էին եղևիկները: Եվ հերթով եղևիկներին դուրս բերեցին փոսից:

Եղևիկները չգիտեին ինչպես իրենց շնորհակալությունը հայտնեն պանդաներին: Նրանք մոտեցան փոքրիկ պանդային:

– Ինչ լավ է, որ դու մեզ նման չես, – ասաց մի եղևիկը: – Եվ շատ լավ է, որ կճղակների փոխարեն դու մագիլներ ունես:

– Եվ շատ լավ է, որ դու կարողանում ես ծառերի վրա մագլցել, – ասաց մյուսը:

Եղևիկներն արդեն իրենք էին ուզում ընկերանալ փոքրիկ պանդայի հետ: Եվ այդ օրվանից նրանք դարձան անբաժան ընկերներ: Հետո՞ ինչ, որ պանդան չէր կարողանում արագ վազել ու թռչկոտել: Փոխարենը նա խելացի էր, բարի և ուրախ: Իսկ եղևիկներն իրենք էլ հասկացան այն, ինչ պանդային ասել էին նրա ծնողները. ընկերներ լինելու համար պարտադիր չէ բոլորին իրար նման լինել:

Թարգմանությունը՝ Վ. Բուռնուլջյանի